<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

06 դեկտեմբերի 2017 թ.
ժամը 11:00

թիվ՝ 3

# Արձանագրություն

*ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-17/20 ծածկագրով գնման ընթացակարգի*

*գնահատող հանձնաժողովի նիստի*

*Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝*

**Գնահատող հանձնաժողովի նախագահ.**
/փոխտնօր./ ԳՊ/ԳԱՊ Վարուժան Շահսուվարյան
**հանձնաժողովի անդամներ**
/փոխտնօր./ ԳՊ/ԳԱ Գագիկ Բազիկյան
/գլխ. հաշվ./ԳՊ/ԳԱ Շուշանիկ Անանյան
/ինժեն. խմբ. ղեկ./ԳՊ/ԲԱ Պետրոս Նադիրյան
/անվտ. ինժեն./ԳՊ/ԲԱ Սլավիկ Հայրապետյան
**Հանձնաժողովի քարտուղար՝**
ԳՊ/Միմ Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

## Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

*Հանձնաժողովի նախագահ Վարուժան Շահսուվարյան*

**1. Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը Կարգի 43-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.13-րդ կետի դրույթներին համապատասխամ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարել է հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն կատարված հարցման վերաբերյալ Կարգի 44-րդ կետի դրույթների պահանջներին համաձայն էլեկտրոնային եղանակով տրամադրել եզրակացություն /կցվում է/::

**2. Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցների որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին**

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կարգի 43-րդ կետի դրույթներին համապատասխան կատարված հարցման վերաբերյալ տրված եզրակացությունը և Մասնակցի կողմից հրավերով սահմանված, որակավորման չափանիշների առկայությունը հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

- <<Դիավանտ>> ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատել բավարար

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ)***, ***դեմ 0 (զրո)***

**3 Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին**

3.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, Մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի լրակազմի տեխնիկական բնութագիրը

և ապրանքի լրակազմի տեխնիկական հագեցվածությունը, Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ *5 (հինգ), դեմ 0 (զրո)* ձայներով.

**գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ Դիավանտ ՍՊԸ-ին**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 /տաս/ օրացուցային օրը:

Ընդունել որոշում կողմ ***5 (հիմգ), դեմ 0 (զրո)***

**Գնահատող հանձնաժողովի նախագահ.**
/փոխտնօր./ ԳՊ/ԳԱՊ Վարուժան Շահսուվարյան

**հանձնաժողովի անդամներ**
/փոխտնօր./ ԳՊ/ԳԱ Գագիկ Բագիկյան

/գլխ. հաշվ./ԳՊ/ԳԱ Շուշանիկ Անանյան

/ինժեն. խմբ. ղեկ./ԳՊ/ԲԱ Պետրոս Նադիրյան

/անվտ. ինժեն./ԳՊ/ԲԱ Սլավիկ Հայրապետյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
ԳՊ/Միմ Հարություն Օհանյան